«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում.

Դաստիարակ՝ Աստղիկ Գալստյան

Մանկապարտեզ՝ «Ալավերդի համայնքի Օձունի մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3
2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ……5
3. **ԳԼՈՒԽ 1.** ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ……7
4. **ԳԼՈՒԽ 2.** ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ, ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ……10
5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……19
6. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական կրթության կարևոր նպատակներից է երեխաների մեջ սերմանել և մշակել այնպիսի որակներ ու հատկություններ, ինչպիսիք են քննադատական մտածողությունը,հետաքրքրասիրությունը,անմիջականությունը, զարմանքը, երևակայությունը և աշխատանքից գեղագիտական հաճույք ստանալը: Բոլոր երեխաներն ունեն այս հատկությունները փոքր հասակում, բայց հաճախ կորցնում են դրանք կյանքի առաջին տասնամյակում: Մինչդեռ այս հատկությունները կարևոր դեր են խաղում սովորելու գործընթացում: Նախադպրոցական կրթության հիմնական նպատակն է երեխաներին զարգացնել այնպիսի միջավայրում, որտեղ բավարարվում են նրանց ֆիզիկական, մտավոր և հոգեբանական կարիքները, որտեղ նրանք պաշտպանված են զգում, արժևորվում են որպես անհատներ և ակտիվորեն ներգրավվում են նոր հմտություններ և գիտելիքներ ձեռք բերելու նպատակով կազմակերպված բազմաբնույթ աշխատանքներում: Նրանք իրենց գիտելիքները և արժեքային համակարգը կառուցում են հասակակիցների, ծնողների և այլ մեծահասակների հետ փոխհարաբերությունների, ինչպես նաև ֆիզիկական ու հասարակական միջավայրի ակտիվ ուսումնասիրությունների միջոցով: Երեխայի առողջ, ներդաշնակ և համակողմանի զարգացման համար անհրաժեշտ է աշխատանքել նրա ֆիզիկական, իմացական, հուզական և սոցիալական ոլորտների հավասարաչափ զարգացման ուղղությամբ: Այս նպատակին հասնելու ուղիներից է մանկապարտեզում ուսումնառությունը ինտեգրված պարապմունքների միջոցով կազմակերպելը: Նախադպրոցական կրթության մեթոդական նորացման կարևոր ուղղություններից է ինտեգրված պարապմունքների անցկացումը մանկապարտեզի մանկավարժական գործընթացում: Ուսումնական առարկաների բովանդակային համակցման շնորհիվ երեխաները ձեռք են բերում իրենց տարիքին համապատասխան բազմակողմանի գիտելիքներ և գործունեության տարբեր ոլորտներում դրանք կիրառելու որոշակի հմտություններ: Ինտեգրված պարապմունքի շնորհիվ ուսուցման գործընթացը դառնում է առավել <<տնտեսված>>: Ինտեգրված պարապմունքի ընթացքում գործունեության մի տեսակն այնպես է ներթափանցված մյուսի մեջ,որ

գրեթե անհնար է դրանք առանձնացնել մեկը մյուսից: Ի տարբերություն դրա թեմատիկ պարապմունքներում գործունեության մի ձևն ակնհայտորեն փոխարինվում է մյուսով: Ինտեգրված պարապմունքներն անցկացվում են խաղերի տեսքով ներառելով մի շարք շարժողական գործուն իրավիճակներ դինամիկ դադարներ, աշխուժացնող, թատերական և շարժական խաղեր: Դրանց միջոցով հնարավոր է դառնում ձևավորել ստեղծագործական հմտություններ, հաղորդակցական կարողություններ և վարվելաձևի մշակույթ:Միևնույն ժամանակ մանկապարտեզի բովանդակալից առօրյան նպաստում է, որ երեխաները դառնան անմիջական, շփվող ու բարի անհատականություններ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մանկապարտեզում ժամանակակից պահանջներին համապատասխան պարապմունքի կազմակերպումը կնպաստի պրակտիկ գործունեության կատարելագործմանը,բովանդակային նոր մոտեցմանը,մեթոդների կիրառմանը:

Ժամանակակից ինտեգրված պարապմունքներին ներկայացվում են հետևյալ պահանջները.

- նոր մեթոդների կիրառում,
- փոխազդեցություն,փոխուսուցում,
- երեխայի ակտիվություն,
- համագործակցություն,
- ինքնարտահայտվելու խրախուսում,
- հետադարձ կապ և այլն:

Ինտեգրված պարապմունքների ուսուցման արդյունքում

- ապահովվում է ծրագրի միջառարկայական կապը
- խրախուսվում է երեխայի ինքնուրույնությունը
- ուսուցումը նպաստում է երեխայի անհատականացմանը

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ և ԲԱԺԻՆՆԵՐԸ

Ձևավորել երեխայի հոգեկան գործընթացը հիշողություն, ուշադրություն, մտածողություն, երևակայություն, խոսք, ապահովել միջառարկայական կապերը տարբեր մեթոդիկաներից:

Պարապմունքի ձևի ընտրությունը, ըստ մեթոդիկաների, որոշում է դաստիարակը ծրագրով նախատեսված թեմային համապատասխան: Եթե տվյալ թեման կարելի է մատուցել խաղի, խաղ-պարապմունքների, էքսկուրսիաների կամ

ինտեգրված պարապմունքի ձևով, ապա դաստիարակն այդ ընտրությունն ամրագրում է պլանավորման մեջ: Այն չի կարող ինքնանպատակ լինել կամ կամայական բնույթ կրել, այլ պայմանավորված է

- ուսուցման նպատակներով և խնդիրներով,
- ուսուցվող նյութի բովանդակությամբ,ծավալով և բարդությամբ,
- երեխաների պատրաստվածության մակարդակով,
- տարիքային առանձնահատկություններով,
- երեխաների թվաքանակով,
- դաստիարակի պատրաստվածության մակարդակով:

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1. ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Նախադպրոցական տարիքի երեխան շրջապատող աշխարհն ընկալում է ամբողջությամբ: Բնականաբար, նախադպրոցական կրթության գործընթացի իրականացումն այսօր դաստիարակից պահանջում է որոնել երեխաների ճանաչողական գործունեության կազմակերպման նոր ու արդյունավետ ձևեր և մեթոդներ:Դա է պատճառը,որ աճել է հետաքրքրությունը ինտեգրված պարապմունքների նկատմամբ:Դրանք իրականացվում են օբյեկտի բազմակողմանի քննությամբ,շրջակա աշխարհի իմաստալից ընկալմամբ գիտելիքների համապատասխան համակարգի ձևավորմամբ, երևակայության խթանմամբ, ստեղծագործական հետաքրքրությունների և դրական հուզական տրամադրության ապահովմամբ: Մանկավարժական բնագավառի մի շարք տեսաբանների կարծիքով ինտեգրված ուսուցումը երեխաների մեջ խթանում է աշխարհի ամբողջական պատկերի ձևավորումը: Ինտեգրված պարապմունքների միջոցով հնարավոր է դառնում ձևավորել կենսականորեն անհրաժեշտ զանազան հմտություններ, հաղորդակցական տպավորություններով կիսվելու կարողություն և մշակույթ:

Ե՛վ տեսաբանները և՛ պրակտիկ մանկավարժները հասկանում են,որ այսպիսի պարապմունքների շնորհիվ երեխաները նույն առարկայի վերաբերյալ ձեռք բերած իրենց գիտելիքները կիրառում են գործունեության տարբեր ոլորտներում: Այդ կերպ ուսուցումը դառնում է առավել <<տնտեսված>> չառանձնացնելով նկարչությունը, խոսքի զարգացումը, երգը, ֆիզկուլտուրան, և երեխաների մեջ ձևավորում է աշխարհի վերաբերյալ ամբողջական պատկեր: Ինտեգրված պարապմունքները երեխային թույլ են տալիս իրականացնելու իր ստեղծագործական բոլոր հնարավորությունները . նա մտածում է, տրամաբանում, երևակայում,հետազոտում: Հարստանում է բառապաշարը,զարգանում են հաղորդակցման կարողությունները:

Ինտեգրված պարապմունքների դրական կարևոր հատկանիշներից մեկն այն է, որ այն անցկացվում է խաղերի միջոցով իր մեջ ներառելով մի շարք շարժողական գործուն իրավիճակներ դինամիկ դադարներ , աշխուժացնող, թատերական և շարժական խաղեր, թարմացնող վարժություններ:

Նախադպրոցական մանկավարժագիտության ներկայացուցիչ Ն. Գավրիշն իր << Ժամանակակից ուսուցում>> գրքում ըստ բովանդակության առանձնացնում է պարապմունքի հետևյալ ձևերը.

- առարկայական-կենտրոնացում
- բազմակողմանի ուղղվածություն ինտեգրված և թեմատիկ պարապմունքներ:

Բազմակողմանի ուղղվածությամբ պարապմունքների հիմնական խնդիրներն են երեխայի բազմակողմանի զարգացումը,տվյալ առարկայի մասին ամբողջական պատկերացումների ձևավորումը:

Այս ամենի հետ մեկտեղ պարապմունքի այս ձևերն ունեն մի շարք առանձնահատկություններ.

• առաջադրանքները հստակեցվում են պարապմունքների յուրաքանչյուր փուլում:

• ինտեգրված պարապմունքը կառուցվում է մեկ ամբողջական գործունեության հենքով:

• Ինտեգրված պարապմունքները սկզբունքորեն պահանջում են հստակ մտածողություն և տրամաբանությունուսուցման բոլոր փուլերում:

• Ինտեգրված պարարապմունքը դաստիարակի, մանկավարժի, երաժշտական ղեկավարի համատեղ աշխատանքի արդյունքն է:

• Ինտեգրված պարապմոնքները երեխային տալիս են բավականին լայն և վառ պատկերացումներ շրջապատող աշխարհի մասին:Հիմնական շեշտը դրվում է ոչ այնքան որոշակի գիտելիքների յուրացման, որքան ստեղծագործական մտածողության զարգացման վրա: Սա հաստատում է երեխաների հետ գործնական աշխատանքի արդյունավետությունը պարապմունքի տվյալ ձևի կիրառմամբ :

Նախադպրոցական բոլոր տարիքային խմբերում հնարավոր է ինտեգրված պարապմունքների իրականացումը: Կարևորն այն է,որ դաստիարակը կարողանա այդ աշխատանքն իրականացնել երեխաների հետ ,ընտրի ճիշտ թեմա ու բովանդակություն բնականաբար,հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները:

Ինտեգրված պարապմունքները պահանջում են հատուկ պատրաստվածություն ոչ միայն դաստիարակների,այլև երեխաների կողմից:Համապատասխանաբար,նման պարապմունքների ամենօրյա իրականացումը համարվում է հսկայական ծանրաբեռնվածություն՝ նախ և առաջ դաստիարակի համար:

Ինտեգրված պարապմունքների նախապատրաստման համար անհրաժեշտ է հաշվի առնել պլանավորման հիմնական պահանջները.

- ընտրել թեման
- պլանավորել պարապմունքը, հիմնական նպատակն ու առաջադրանքները
- ըստ անհրաժեշտության փոփոխել առաջադրանքների հաջորդականությունը
- հստակեցնել պարապմունքների բովանդակությունը
- ապահովել նյութեր, որոնք ծառայում են պարապմունքի բուն նպատակին

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 2. . ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ, ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ

Պարապմունքները անցկացվում են շաբաթական տեղաբաշխման գրաֆիկի և կանոնակարգի (ռեժիմի) համաձայն:Յուրաքանչյուր հաստատություն կազմում է իր պայմաններին և յուրահատկություններին համապատասխան ռեժիմ բնականաբար կատարելով կանոնակարգային առանձին պահերի փոփոխություն:Պարապմունքների միջև պետք է ապահովել ընդմիջումներ/ դադարներ,որոնք անհրաժեշտ են երեխաների ֆիզիկական ակտիվացման և մի պարապմունքից մյուսին սահուն անցումն ապահովելու համար: Երեխաների հետ աշխատանքն իրականացվում է խաղային գործունեության միջոցով:

Պարապմունքները տարվում են երկու ձևով

- համընդհանուր ուսուցման ձևով ,որը հիմնականում կատարվում է նոր նյութի հաղորդման ժամանակ
- մի քանի պարապմունքների ինտեգրման ճանապարհով, օրինակ մաթեմատիկա-նկարչությոն,խոսքի զարգացում-ապլիկացիա, գրաճանաչություն-երաժշտություն և այլն:

Թեմաների զարգացումը, նյութի ամրապնդումը, ամփոփումը կարելի է կատարել կիրառելով ուսուցման փոխգործուն մեթոդները, օգտագործելով աշխատանքային կենտրոնները և կազմակերպելով փոքր խմբերով աշխատանք: Պարապմունքները երեխաների համար հնարավորություն են ստեղծում ճանաչողական գործընթացը դարձնել իրական փորձառություն,որն օգնում է յուրաքանչյուր երեխայի լիարժեք բացահայտել իր ստեղծագործական կարողությունները, բավարարել հետաքրքրությունները: Պարապմունքների ժամանակ երեխաները հետազոտում են, ուսումնասիրում,պրպտում,լուծումներ գտնում,որոշումներ կայացնում:Նրանք սովորում են ոչ միայն դաստիարակին լսելով, այլ նաև սեփական փորձով, ընկերների հետ քննարկելով, պարապմունքին մասնակցող այլ մեծահասակների հետ շփվելով:

Պլանավորված պարապմունքներն իրականացվում են խմբով, ենթախմբերով, անհատական կախված ուսուցանվող նյութի բովանդակությունից, թեմայի

նպատակներից, երեխաների նախապատրաստվածության մակարդակից և հոգեբանական առանձնահատկություններից,ծնողների պահանջներից:

Խառը նախադպրոցական խմբերում, ցանկալի է ամբողջ խմբի երեխաների հետ պարապմունքներն անցկացնել ծրագրի մեկ բաժնի մասով:Կախված պարապմունքի բնույթից դրանց բովանդակության մեջ թույլատրելի միացումն ինքնին պիտի բխի երեխաների տարիքային տարբերություններից:Լավագույն տարբերակը ենթախմբերով աշխատանքն է:Դաստիարակը պարապմունքը սկսում է ամբողջ խմբի հետ:Խթանման փուլից հետո , խումբը բաժանվում է տարիքային ենթախմբերի և միևնույն թեմայի շրջանակներում յուրաքանչյուր խմբին հանձնարարվում է իրենց տարիքային առանձնահատկություններին համապատասխան առաջադրանք:

3-4 տարեկան երեխաների պարապմունքը կարող է տևել 15-20 րոպե, 4-5 տարեկան երեխաներինը 20-25 րոպե և 5-6 տարեկաններինը 25-30 րոպե: Պարապմունքների ընթացքում անց է կացվում թարմացնող վարժություններ կամ աշխուժացնող խաղ 2-3 րոպե տևողությամբ:Պարապմունքների միջև կազմակերպվում է ընդմիջում 10-12 րոպե տևողությամբ: Ընդմիջումների ժամանակ անհրաժեշտ է կազմակերպել աշխուժացնող, արմացնող, կարճատև խաղեր, խուսափելով չափազանց ակտիվություն առաջացնող և երկարատև խաղերից:

Պարապմունքների ընթացքում երեխաների ակտիվ շարժունակության և բարձր աշխատունակության ապահովման համար կարևոր է, որ դաստիարակը նախապես ճիշտ պլանավորի գործունեության առանձին տեսակների և հանգստի հերթագայումը:

Երեխաներն իրենց հերթին դառնում են գիտակ,ինքնատիպ մտածողներ,որոնց թույլ է տրվում նոր ձևերով դրսևորել իրենց գիտելիքները: Երբ այսպիսի համալիր ուսուցումը մանրակրկիտ պլանավորվում և իրականացվում է,ապա արդյունքում երեխաները դրսևորում են հետևյալ հատկանիշները.

- հոգատար են միմյանց նկատմամբ
- հետաքրքիր կապեր են ստեղծում
- կատարելագործում են իրենց շփման և երկխոսության հմտությունները
- ձևավորվում են որպես համայնքի անդամներ:

Պարապմունքների ընթացքում երեխաներն աստիճանաբար սովորում են ինքնուրույն աշխատել, և այդ կերպ ձևավորվում են հետազոտական հմտություններ ու կարողություններ: Նրանք սովորում են համարձակ արտահայտել իրենց կարծիքներն այս կամ այն հարցի շուրջ: Կարողանում են ամփոփել իրենց սովորածը և իմացածը ընտրած թեմայի շրջանակում: Կատարում են համեմատություններ և գտնում տարբերությունները,ազատ և անկաշկանդ երևակայությամբ ստեղծագործում են և ներկայացնում իրենց կատարած աշխատանքները: Սովորում են կարծիք հայտնել ընկերոջ աշխատանքի վերաբերյալ: Նման ուսումնական գործունեությունը <<նախապատրաստված, ցուցադրական պարապմունքի>>, նույնիսկ ժամանակակից <<բաց պարապմունքների>> գաղափարն իսպառ կվերացնի նախադպրոցական հաստատությունների պրակտիկայից, և այն կվերաճի ուսուցանող թեմայի ամփոփման գործելակերպի:

Հետազոտության աշխատանքի ժամանակ աշխատել եմ ավագ նախադպրոցական տարիքի քսաներկու երեխայի հետ:Իմ կողմից ընտրվել է ինտեգրված պարապմունք, ԽԻԿ համակարգով:

Պարապմունքին մասնակից են եղել տնօրենը, մեթոդիստը և երաժիշտը:

Պարապմունքի պլան

Ինտեգրված պարապմունք

Թեման <<Հաց>>

Նպատակը

- ամրապնդել երեխաների գիտելիքները հացի մասի :
- զարգացնել երեխաների կապակցված խոսքը, մտածողությունը,մտքերն արտահայտելու կարողությունը:
- զարգացնել հանելուկներ գուշակելու կարողությունը:
- հարստացնել երեխաների բառապաշարը հացթուխ, ցորենահասկ, ալրաղաց, գունդ և այլ բառերով:
- ոտանավորի ուսուցում

Վերջնարդյունքներ

- պատասխանի հարցերին
- տիրապետի կապակցված խոսքի կարողություններին
- գուշակի հանելուկներ
- ընտրի համապատասխան բառեր անավարտ միտքը լրացնելու համար

Անհրաժեշտ նյութերեր՝

- հաց պատկերող նկարներ
- պաստառ
- A4 թղթեր
- գունավոր մատիտներ
- աղի խմոր,հաց
- կառուցողական դեկորներ

Պարապմունքի ընթացքը.

Երեխաները նստած են կիսաշրջանաձև, դաստիարակը նույնպես նստած է նույն հարթության վրա:

Խթանման փուլ

Դաստիարակը ցուցադրում է հացի նկար և հարց է տալիս

_ Երեխաներ, ինչպե՞ս է հացը հասել մեզ:

_ Ի՞նչ գիտեք հացի մասին:

Յուրաքանչյուր հարցից հետո ժամանակ տալ, որ երեխաներից մի քանիսը պատասխանեն:

Իմաստի ընկալում

Դաստիարակը ներկայացնում է, թե ինչպես է հացը հասել մեզ, ինչքան չարչարանքով են մարդիկ հողը մշակել, ցորեն ցանել, հնձել, կալսել, աղացել, ալյուր ստացել, խմոր հունցել, որ նոր հաց են թխել:

- Երեխաները արտահայտում են իրենց իմացածը հացի մասին:

Դաստիարակը կատարում է դադարներով ընթերցանություն,ցորենին վերաբերվող մի պատմություն:

Յուրաքանչյուր դադարից հետո, դաստիարակը հարց է տալիս, երեխաները քննարկում են զույգերով:

Քննարկումից հետո ,դաստիարակը խնդրում է 2-3 երեխա պատմել,թե ինչի մասին են խոսել:

Հարցեր երեխաներին

-Ձեզ դուր եկա՞վ այս պատմությունը:

-Ինչի՞ մասին էր այն:

-Հնում, երբ հացը դեռ չկար, ինչո՞վ էին սնվում մարդիկ:

-Ինչու՞ որոշեցին ցորենահատիկը պահել, պահպանել:

-Տղայի գտած հատիկը ինչպե՞ս անվանեցին:

-Եկեք պատկերացնենք, թե ի՞նչ բացականչություններ արտաբերեց տղան,երբ գտավ ցորենի հատիկը և զգաց դրա համը:

Երեխաներն արտաբերում են տարբեր ձայնարկություններ և հրճվում:

Տեքստի ավարտից հետո, քննարկման միջոցով ամփոփել օգտագործելով հետևյալ հարցերը.

- ի՞նչ սովորեցիք այս փոքրիկ պատմվածքից

-ի՞նչ կարող եք պատմել:

Լսել պատասխանները:

Դաստիարակը մի քանի հայկական ժողովրդական ասացվածք է ասում և երեխաներին առաջարկում է բացատրել դրանց իմաստը:

Դաստիարակն առաջարկում է լսել և գուշակել հանելուկներ:

Ֆիզկուլտդադար <<Այյուր ենք մաղում>>

Աշխատանքային կենտրոններում



Կշռադատման փուլ

Պարզեցի ,թե ինչ զգացողություններ առաջացան երեխաների մեջ,լսելով հացի մասին պատմությունը,բանաստեղծությունները,հանելուկները ,ասացվածքները և ինչ նոր բան սովորեցին:

Աշխատանքը ամփոփել <<Դեմ առ դեմ>>

մեթոդով:

Միմյանց ցույց տալ իրենց կատարած աշխատանքները և փակցնել պաստառին:

Դիտարկում

Դաստիարակը լիովին հասավ իր առջև դրված նպատակին, ընտրված էր մեթոդապես ճիշտ և ՀՊՁ-ին համապատասխան պարապմունք: Պարապմունքի թեման բխում էր ծրագրային պահանջներից, նպատակը և վերջնարդյունքը հստակ ձևակերպված էին:Պարապմունքի բոլոր բաժինները շաղկապված էին միմյանց:

. Երեխաները ակտիվ ներգրավված էին պարապմունքին:Հարցերը ընտրված էինճիշտ:Երեխաները իրենց մտքերը կարողանում էին արտահայտել ազատ և ինքնուրույն:Նրանք մատչելի ձևով ներկայացրին հացի ստեղծման պատմությունը,անհրաժեշտությունն ու անգնահատելի դերը մարդու կյանքում:

. Շատ եմ կարևորում դաստիարակի կողմից ընտրված թեման ,քանի որ այն ունիճանաչողական,ուսուցողական և դաստիարակչական նպատակ:

Այս տեսակ պարապմունքները ապահովում են երեխայի մտավոր, սոցիալական,հուզական,ֆիզիկական և էսթետիկական ոլորտների համակողմանի զարգացումը

«Ալավերդի համայնքի Օձունի մանկապարտեզ»

ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Մ. Մայիլյան

1. Դաստիարակը հասավ իր առջև դրված նպատակին, իր մեթոդապես ճիշտ կառուցված պարապմունքի շնորհիվ(բազմաթիվ դիդակտիկ նյութեր, նախապես կազմակերպված զբոսանքներ ալրաղաց,հացի փուռ) և այնուհետև պարապմունքի ճիշտ կառուցվածքհամապատասխան հանրակրթական պետական չափորոշչի,նրա բազմափորձությունը, արագ կողմնորոշվելը և հմտությունը

2. Երեխաները ոգևորված էին և նաև պատասխանատու, քանի որ պարապմունքն ուղեկցվում էր թեմային համապատասխան երգերով, պարերով և հաց ստեղծելու անհրաժեշտ գործիքներով ու նյութերով:

3. Այո,դաստիարակի կողմից հետազոտվող թեման մեծ կարևորություն և անհրաժեշտություն ուներ նախադպրոցական կրթության մեջ ,դեռևս այդ տարիքից երեխաների մեջ պետք է սերմանել հարգանք դեպի հացը,աշխատասիրություն և հաց ստեղծելու ,արարելու կարողությունը,որ իսկապես <<հացը սուրբ է>>:

Մեթոդիստ՝ Ն. Շոլինյան

Դիտորդները եկան այն եզրակացությանը,որ ինտեգրված և մեթոդապես ճիշտ ընտրված պարապմունքները շատ արդյունավետ են: Նրանք կարևորեցին նաև պարապմունքի ընթացքում կատարված էքսկուրսիաները ,որը երեխաներին ավելի ոգևորող և տրամադրող էր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով,հետազոտական աշխատանքի ավարտին եկա այն եզրահանգմանը , որ նախադպրոցական կրթության ոլորտում ՀՊՉ -ին համապատասխան պարապմունքների կազմակերպումը բարելավում է ուսումնական միջավայրը, ապահովում է ուսումնառության շարունակական գործընթացը:

Ինտեգրված պարապմունքի ընթացքում երեխաները ձեռք բերեցին այնպիսի գիտելիքներ ու հմտություններ,որոնք չեն կարող յուրացնել ամենօրյա հաղորդակցման և ազատ գործունեության ընթացքում:

Եվ այսպես, երեխաները զարգանում են այնպիսի միջավայրում, որտեղ բավարարվում են նրանց ֆիզիկական, մտավոր, հոգեբանական կարիքները, նրանք պաշտպանված և արժևորված են զգում իրենց:

Ինտեգրված պարապմունքների միջոցով ավելի ենք հասնում մեր առջև դրված նպատակներին:

- Հետազոտական աշխատանքի ավարտին ինձ համար շատ կարևոր դարձավ այն, որ սանի զարգացումը համակողմանի և լիարժեք է ընթանում,եթե բոլոր բաղադրիչներով միաժամանակ և շարունակական աշխատանք է տարվում:
- Ես հասա իմ նպատակին, այն ինչ նշել էի ներածության մեջ, ըստ իս հասցրի ավարտին:
- Այս թեմայի շրջանակներում կուզենայի,որ բոլոր դաստիարակներս,մեծ ուշադրություն դարձնեինք ծրագրային այն բոլոր բաղադրիչներին,որոնք ուղղված են ոլորտային վերջնարդյունքների ապահովմանը,որոնք էլ միտված են առանցքային կարողունակությունների ձևավորմանն ու զարգացմանը :
- Եվ շատ կարևոր է կիրառել նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված ինը կարողունակությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ռ.Ծառուկյան,Հ.Միտոյան,Լ.Սմբատյան,Ն.Նիկողոսյան «Դաստիարակի ուղեցույց» Երևան 2011
2. 2. Նախաշավիղ Լ.Վերդյան 8 . 2012
3. Նախաշավիղ Լ.Սմբատյան 1.2015